

ՓՈՆԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

ԿՈՐԱՆՑՈՒՑԻՆԷ «ՇՐՋՈՒՆ ԸԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ» ՍԸ՝ ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆԸ

Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ

Նկար մը, դէմք մը կամ դիպուած մը յաճախ մարդուս յիշողութեան պատաստին կը բերէ-կը շարէ յիշատակներ, որոնցմէ մաս մը կը կարծենք կորսնցուցած ըլլալ անցեալ կոչուող անյատակ ջրհորին մէջ, եւ սակայն, կ'անդադառնանք որ անոնք հոն են, մնացած են անջնջելի ու մաս կը կազմեն մեր աննիւթական հարստութիւններուն:

Նման վիճակի մատնուեցանք քանի մը օր առաջ, երբ «Ասպարէզ»ի էջերուն ցնցումով մը կարգացինք Նուպար Չարխուտեանի մահուան գոյժը: Պէյրութեան ու Լոս-անձեյըսեան հայկական մամուլին հետեւող ընթերցողին ակնուցով՝ «Նաւարի Ասպետներ» հոգակաւոր ու հետաքրքրաշարժ պատմուածաշարին հեղինակը մեկնած էր անդառնալի կերպով, նուազ քան դար մը իր ժողովուրդին դժբախտութիւններու եւ խորխտանքին մասնակից ըլլալէ, անձնական տագնապալի հանգրուաններ կտրելէ եւ ճերմակի վրայ սեւով ստուար ժառանգութիւն մը ստեղծելէ ետք:

Ու մեր յիշատակներու գլանները թաւալեցան արագօրէն, գացին ետ, մինչեւ 70ականներու սկիզբներուն օր մը, երբ Նուպար Չարխուտեանին հանդիպեցանք առաջին անգամ. ան այդ օրը, մեզի համար «Ազգակ»ի էջերէն իբրեւ սոսկական անուն դուրս գալով, միս-սկորով նստած էր նոյն սեղանին շուրջ:

...Հայկազեան Համալսարանի (այդ օրերուն՝ Քոլէճ) շէնքին գագաթը բազմած ճաշարան-սրճատունն էինք գրականութեան մեր դասախօսներէն՝ Պրն. Շահինեանի հետ: Պրն. Շահինեանը կը սիրէինք ու կը յարգէինք նա՛եւ անոր համար, որ երբեմն դասախօսութիւններուն համար կը «խորտակէր» դասարաններու պատերը ու մեր հանդիպումները կ'ունենայինք այդ ճաշարանին մէջ կամ մինչեւ իսկ իր բնակարանին պատշգամբ, մանաւանդ երբ տուեալ դասանիւթին հետեւողներուն թիւը փոքր ըլլար: Յիշեալ յետմիջօրէին, երբ ճաշարան մտանք, ճշդուած անկիւնը, դասաւորուած սեղաններուն ետին, մեր դասախօսին կողքին նկատեցինք քիչ մը աղ, շատ պղպեղ մագերով եւ մութ ակնոցներու ետին ապաստանած անծանօթ մը, որուն հետ Պրն. Շահինեան հաճելի խօսակցութեան բռնուած էր ու մեզ ալ հրաւիրեց մասնակից ըլլալու: «Ո՞վ է», հարցուցի ընկերներէս մէկուն. «Նուպարի Ասպետը», պատասխանեց կատակելով: «Ազգակ»ի մէջ իր ստորագրած պատմուածքներու այդ շարքին պատճառով, անձին անծանօթ ընթերցող ուսանողներս զինք այդ անունով մկրտած էինք:

Խօսակցութեան նիւթե՞րը.

քիչ մը գրականութիւն, շատ մը եւրոպական-փարիզեան փորձառութիւններ ու տպաւորութիւններ էին: Պրն. Շահինեանն ալ եւրոպայի մէջ ուսանելու բախտը ունեցած էր: Նուպար Չարխուտեան կը խօսէր կարճ նախադասութիւններով. թողուց ամէկտի, ներհայեացի տպաւորութիւն, այսինքն՝ մարդու մը՝ որուն հետ հաղորդակցիլը դիւրին է: Կարճ ատեն մը առաջ, եթէ չենք սխալիր՝ 60ականներու վերջերուն վերադարձած էր Յրանսայէն, կեանքի պայմաններու բերումով՝ մեծ ու շացումով եւ նոյնքան մեծ դժուարութիւններով հագեցնելէ ետք բարձրագոյն ուսման իր իղձը, որովհետեւ յետեղեռնեան ու բռնազաղթի տարիներուն, հայրենի Մարաշէն հետու ինկած մանուկը, պատանին, հազիւ նախնական ուսումը մասնավճարներով ձեռք ձգած, որը մնացած էր ու ինկած՝ ապրուստ հոգալու ճամբուն մէջ, հարկադրաբար ու տասնամեակներ շարունակ յետաձգելով բարձրագոյն ուսման իր ծառային յազուրդ տալը:

Անկէ ետք, «Ազգակ»ի խմբագրատուն մեր հազուադէպ այցելութիւններուն առիթով, զինք կը տեսնէինք իր սեղանին ետին, գրամեքենան գնդախորի մը արագութեամբ «կրակելու» դիրքին մէջ: Կը զգայինք, որ ունէր իր աշխարհը, ու մենք զինք ու իր աշխարհը կը դիտէինք ակնածանքով, առանց համարձակելու իրեն մօտենալ:

Օր մըն ալ, Լիբանանի տագնապի առաջին հանգրուաններուն, մեր քայլերը առաջնորդուեցան «Ազգակ»ի յարկը, ուր իբրեւ պաշտօնակից ունեցանք Նուպար Չարխուտեանը: Առաջին օրերուն, անոր վարմունքն ու մեկուսի մնալը պահ մը վերաթարմացուց տարիներ առաջ մեր քաղած այն տպաւորութիւնը, թէ ան քիչ մը փրոսկրեայ աշտարակի մէջ ապրող մարդ էր ու կարելի չէր անոր հետ մտերմութիւն ստեղծել:

Շաբաթները յետոյ վերածուեցան ամիսներու եւ կազմեցին տարիներ: Ամենօրեայ գործակցութիւնը, մանաւանդ պատերազմական պայմաններու բերումով, երբեմն շաբաթներ շարունակ խմբագրատան գրասենեակներուն մէջ պարտադիր բանտարկեալ մնալու կացութիւնները ձեռնհաս տարիներու Նուպարին հետ մեր յարաբերութիւնները ու զինք ճանչցանք իբրեւ բոլորովին տարբեր մարդ: Միակ անյղի բանը մնաց այն, որ ան ունէր իր աշխարհը, սեփական միջոցաւոր, ուր կ'ապաստանէր յաճախ, ստեղծագործական երկունքի պահերը բոլորելու համար...

Նուպար Չարխուտեան մարդուն «կեղեկները» քակուեցան մեր աչքերուն առջեւ. ծանօթացանք իր ապրած

դժբախտութիւններուն, սկսելով ուսանողական տարիներէն ու կեանքի յաջորդ հանգրուաններէն...: Հասկնալի ու, աւելին՝ շրջանցելի դարձան անոր «եսակեղրոնութիւն»ն ու «վերապահութիւնները»: Յայտնաբերեցինք, որ կարելի է ո՛չ միայն անոր հետ հաղորդակից ըլլալ, այլ նաեւ հաճելի գրոյց ունենալ հարցերու եւ նիւթերու մասին, որոնք կ'ընդգրկեն գրական, արուեստի, երաժշտութեան, քաղաքական, գիտութիւններու եւ դեռ՝ շատ ու շատ աշխարհներ: Նկատեցինք, որ ամէհի ընթերցող մըն էր. կրնար շաբաթը հարիւրաւոր էջոց քանի մը գիրք «խօրել» ու զանոնք մթերել իր իմացական կալուածին ծակն ու ծուկը, ուզած մէկ պահուն որեւէ գիրքի կամ հեղինակի ու նշանաւոր դէմքի մասին կենսական տեղեկութիւնները վերստին դուրս քաշելու կարողութեամբ. կը բաւէր, որ ցուցամատը քանի մը ակնթարթ ճակտին դնէր՝ համակարգիչի մէկ կոճակին վրայ ճնշելու պէս...

Իսկական շրջուն համայնագիտարան մըն էր Նուպարը: Երբ լրատու աղբիւրներ կը հաղորդէին Նոպէլեան մրցանակի թեկնածուներու անունները, Նուպար պէտք չուներ սպասելու անոնց մասին տրուելիք հաղորդումներուն ան գիտէր, թէ ո՛ր հեղինակը, պետական ո՛ր անձնաւորութիւնը կամ ո՛ր գիտնականը ինչպիսի վաստակ ունի: Ու ան պատրաստ էր քանի մը ժամէն տուեալ անձը ներկայացնելու տեղեկատուական-վերլուծական յօդուածով մը, երբեմն նաեւ թնդանօթի բռնելով Նոպէլեան մրցանակի վարիչները, բացայայտելով անոնց քաղաքական կամ այլ յետին նպատակներով կատարած մրցանաշնորհումներուն ծալքերը...: Իսկ եթէ պատահէր, որ լրատու աղբիւրները հաղորդում մը կատարէին որոշ անձնաւորութեան մը մասին, եւ Նուպար ըսէր, թէ ինք այդ մարդուն անունը չէր լսած, չէինք վարանք գեղջելու այդ անձին մասին լրատուութիւն: Եթէ Նուպար չէր գիտէր, ընթերցողին համար կորուստ պիտի չըլլար այդ մասին չգիտնալը...

Ճիշդ է, որ Նուպար Չարխուտեանի անունը առաւելաբար կապուեցաւ «Նաւարի Ասպետներ»-ու շարքին, սակայն անոր հետաքրքրութիւններն ու գրիչին արգասիքները շատ աւելի ընդարձակ էին ու բեղուն: 70ական տարիներու ընթերցողները պիտի յիշեն թէ ան կը ստորագրէր նաեւ «Լուսաւոր Դէմքեր» խորագրեալ շարքի մը տակ, ներկայացնելով հայ թէ այլ ժողովուրդներու ակնաւոր ու երախտաւոր դէմքերը, անոնք ըլլալին գրող, կրօնաւոր, գիտնական, արուեստագէտ թէ այլ կալուածներու ստեղծողներ: Մա-

ԵՂԵՐԱԿԱՆ ԱՐՇԱԼՈՅՍ

Ծ.Խ.- Սոյն բանաստեղծութիւնը ստացած էր խմբագրութիւնս, քանի մը շաբաթ առաջ: Դժբախտաբար, այս տխուր առթիւ, լոյս կ'ընծայեմք գայն:

Քննադատ, մարդկութեան որբեր, քննադատ, խաւարած լոյսեր, Անմահ յիշատակներ, փորուած աչքեր, անշքու ճի բերաններ, Քննադատ հանգիստ, քանի մեք կը հսկեմք ձեր բունին վրայ, Ո՛վ նահատակներ, գորս խորթ հովերը միայն կը շոյեն:

Երկիմքը լոյս էր, արտերը կանաչ, լեռները ներմակ, Ապրիլ նստած էր Հայոց Աշխարհի ողջ հողին վրայ, Կեանքը կը պատուէր դաշտերուն արգանդը կայտառ ու կը խառնուէր յորդող գետերու բիրտ հոսանքներուն:

Սարերու լանջին, ուր կը տարածուի մարմանդը բերրի, ձերմակ հոտերը ի գուր կը սպասեն հովիւի երգին: Գիւղերը լուռ են, իսկ նամբները՝ ամառի ու մերկ, Եւ մարգը տեղ-տեղ արիւնով կը ստեղծէ կարմիր կակաչներ:

Կարմիր կակաչներ կը վիրաւորեն հողը հայրենի, Խուլ հոնդիւն մը կը ցնցէ կողը ապառաժներուն, Անդաստանները կը սպասեն ի գուր տխուր դողանջին Գետնամած վանքերու օրհնաբեր կոչակին:

Ու եղաւ գիշեր՝ աղամանակալու ու բուրումնաւետ: Յանկարծ ասողերը սկսան դողալ մանուկներու պէս: Հսկայ քաղաքին մութ փողոցները հեւացին տեղիէ, Երբ դահիճները ստուերներու պէս ելան որջերէն:

Արշալոյսը մեռելածին մըն է այլեւս, լոյսը կը սարսափի, Արեւը մխտած է կապոյտ երկիմքին ծիծաղներն իսկ, Եւ անջրպետին թարթիչներուն վրայ կը շարուին Որբերուն լացը եւ այրիներուն ողբը անարձագանգ:

Կախաղաններու տակ անպարտ հերոսներ միասին կ'երգեն Եւ սեւ դահլիճին կ'երկարեն իրենց պարանոցը սէգ ու կը լոնցեն անբան խուժանին մոլեգնութիւնը Պոռալով անուր իրենց պաշտած սրբութիւններուն:

Խուլ անտառին մէջ, մէյ-մէկ գանկ բռնած, Հարբած դահիճներ արիւն կը խմեն կոյսերու վերքէն, «Երգեցէ՛ք, պարեցէ՛ք, սարուկ աղջիկներ «Որպէսզի մեր սիրտերը խայտան ու հրնուին:

«Այնքան Հայեր մորթեցինք այսօր, ո՛վ Հայուհիներ, «Այնքան լոյսեր մարեցինք ձեր երաջաններուն աչքին մէջ, «Որ արեւը խաւարեցաւ անիւղ լամբի մը պէս, «Եւ մեր ոտներուն տակ ցնցուեցան թագաւորութիւններ:

- Այս գանկը կը պատկանի Սիամանթո կոչեցեալին, Աչքին հուրը գիս կը ծակէր շիկացած սուրի մը պէս: Կուրծքը եզմեցի ոտքիս տակ եւ փորեցի աչքերը, Յետոյ լեզուն կտրեցի ու նետեցի շուներուն:

- Այս գանկը կը պատկանի Վարուժան կոչեցեալին: Չայնը տիրակալն էր լեռնաթաւալ շուրերուն պէս, Ան կը նայէր աչքերուս մէջ՝ ինչպէս իշխանը իր ստրուկին: Թուրիս մէկ հարուածով անջատեցի անոր գլուխը:

- Այս գանկը կը պատկանի պերճաբարբառ Զօհրայից, Որ գիս փրկեց անցեալ տարի դատաւորին մահաճակիւն: Ճանչցաւ գիս ու գարմանքով նայեցաւ աչքերուս մէջ: Զինք առի ոտներուս տակ ու փշրեցի ակոսները:

Ու բոլորը միասին, իրարու բախելով գանկերը, Որոնց նեղքերէն կը հոսէր իրենց գոհերուն արիւնը, Մէկը միւսին ետեւէն պոռացին, Զարդարեա՛ն, Ռուբէ՛ն Սեւակ, Ինարա՛, Ակնուհի՛, Երուսա՛ն...

Ն.Զ.

մուլի էջերուն կը մնան Յեղասպանին հանդէպ իր ցասման ու վեհ վրիժառական գագոններուն վիպական արտայայտութիւններէն բազմաթիւ էջեր, պատմական ու շագրաւ հանգրուաններ իրաւաստուկ ոճով վերարտադրող գրութիւններ ու ուսումնասիրական յօդուածներ: Թերթ-մամուլի էջերէն առաջ ու անոնց զուգահեռ, Նուպար Չարխուտեան մեր գրադարաններուն յանձնած է շարք հատորներ: Առաջինները լոյս ընծայած է Ֆրանսե-